

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2015 թ. հոկտեմբերի 14-ին կայացած
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2016-2020) նախագծի քննարկում (տալ գրավոր առաջարկություններ):
2. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրերի կատարողականի մասին / զեկ. դոց. Ա. Ղարազույյան/:
3. Դոցենտի կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորման հարցը /զեկ. դոց. Ն. Խաչատրյան/:
4. Տպագրության երաշխավորման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի նախագծի քննարկման հարցը:

Արտահայտվեցին՝ դեկան Ա. Բաղդասարյանը, Հ. Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել գրավոր առաջարկություններ:

2. Լսեցին՝ Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական որակավորման կրթագիտական ծրագրի կատարման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ դոց. Ա. Ղարազույյանը:

Նա նշեց, որ մասնակիցների մոտ 80 տոկոսը կհաղթահարի սահմանված շեմը: Մոտ 8 հոգի գտնվում են ծայրահեղ վիճակում: Ամենաթույլ կողմը ուսումնամեթոդական ձեռնարկների հարցն է:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Դոցենտի կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորման հարցը:

Արտահայտվեցին՝ դոց. Ն. Խաչատրյանը:

Նա նշեց, որ մրցութային հանձնաժողովը քննարկել է Ն. Հարությունյանի և Ս. Մանուկյանի փաստաթղթերը, հաստատել և ներկայացրել է գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշցին՝ Երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչում ստանալու գործընթացին:

4. Լսեցին՝ Ընդհանուր հոգեբանության և Սոցիալական հոգեբանության ամբիոնների կազմակերպած կոնֆերանսների նյութերի տպագրության երաշխավորման հարցը:

Արտահայտվեցին՝ Հ. Ավանեսյանը, Գ. Սողոմոնյանը, Գ. Շահվերդյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել տպագրության:

5. Ընթացիկ հարցեր՝

- ԵՊՀ հարյուրամյակի կապակցությամբ միջոցառումների մշակում:
- Տարբերակված աշխատավարձի հարցը:
- Հեռավար ուսուցման հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան